

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

«---» հոկտեմբերի 2015թ.

N--- -Ն

ՈՐՈՇՈՒՄ

ԳԱԼՈՅԱՆ ԵՂԲԱՅՐՆԵՐԻ ԱՆՎԱՍԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

Երևան քաղաքի Սարմենի փողոցի և Մարշալ Բաղրամյան պողոտայի միջանկյալ ճանապարհահատվածն անվանակոչել Գալոյան եղբայրների անվան փողոց:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԳԱԼՈՑԱՆ ԵՂԲԱՅՐՆԵՐԻ ԱՆՎԱՍԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ

Գալոցյան եղբայրներից՝ Մուսայել Գալոցյանը, ծնվել է **1921**թ. հունիսի **13**-ին Արթիկի շրջանի Անուշավան գյուղում: Ավարտել է Երևանի թատերական տեխնիկումը: Աշխատել է Արթիկի թատրոնում՝ մարմնավորելով գլխավոր դերեր: Մուսայել Գալոցյանը մասնակցել է Երկրորդ համաշխարհային պատերազմին, պարգևատրվել է Հայրենական պատերազմի երկրորդ աստիճանի շքանշանով: Մուսայել Գալոցյանը թատերական ինստիտուտն ավարտելուց հետո աշխատել է պետական ակադեմիական թատրոնում, այնուհետև տեղափոխվել է նորաստեղծ հեռուստատեսություն, դառնալով հայկական հանրային հեռուստատեսության հիմնադիրներից մեկը: **1967**թ. նրան շնորհվել է վաստակավոր արտիստի կոչում: Մուսայել Գալոցյանը ղեկավարել է Ժողովրդական արվեստի թանգարանը, Ժողովրդական արվեստի հանրապետական գիտամեթոդական կենտրոնը, եղել է Խաչատուր Աբովյանի տուն-թանգարանի տնօրենը: Նա հանդիսացել է Հայաստանի թատերական գործիչների, Հայաստանի գրողների և Հայաստանի ժուռնալիստների միության անդամ:

Ալեքսանդր Գալոցյանը ծնվել է **1924**թ. հունվարի **13**-ին Անուշավան գյուղում: Ավարտել է բժշկական տեխնիկումի դեղագործական բաժինը: Նա Երկրորդ համաշխարհային պատերազմի մասնակից է, պարգևատրվել է մի շարք շքանշաններով և մեդալներով: Ալեքսանդր Գալոցյանն ավարտել է ՀՀ պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետը և Պլատիգորսկի դեղագործական ինստիտուտը: Նա հիմնել և ղեկավարել է «Հայրուժտեխնիկա» միավորումը, երկար տարիներ ղեկավարել է ՀՍՍՀ առողջապահության նախարարության դեղատնային գլխավոր վարչությունը, եղել է ՀՀ առողջապահության նախարարության դեղատնային ոլորտի գլխավոր մասնագետ: Ալեքսանդր Գալոցյանի մասնակցությամբ հիմնվել է Հայաստանի քիմիադեղագործական գործարանը: Մեծ է նրա դերը նաև Երևանի պետական բժշկական համալսարանի դեղագործական ֆակուլտետի բացման գործում:

Գալուստ Գալոցյանը ծնվել է **1927**թ. մարտի **1**-ին Անուշավան գյուղում: **1945**թ. ավարտել է Արթիկի շրջանի Փանիկ գյուղի միջնակարգ դպրոցը, այնուհետև Երևանի պետական համալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետը: **1963**թ. նրան շնորհվել է պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճան: **1964**թ. արժանացել է պրոֆեսորի գիտական կոչմանը: **1982**թ. ընտրվել է ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս: Նա եղել է ՀԽՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի տնօրեն, ՀԽՍՀ ԳԱ փոխնախագահ, ՀԿԿ Կենտկոմի քարտուղար, նշանակվել է ՀՀ ԳԱԱ նախագահի խորհրդական: Նրա ղեկավարությամբ հրատարակվել է Հայ ժողովրդի պատմության ութհատորյակը:

Գալուստ Գալոցյանը ՀԽՍՀ Պետական մրցանակի դափնեկիր է, պարգևատրվել է Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով, **1988**թ. նրան շնորհվել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի պատվավոր կոչում:

Գալոցյան եղբայրների անվամբ փողոց անվանակոչելու վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Ա. Գեղամյանի կողմից:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի **12**-րդ հոդվածի **1**-ին մասի **23**-րդ կետի դրույթներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարության **2005** թվականի դեկտեմբերի **29**-ի N **2387**-Ն որոշմամբ հաստատված կարգի **4**-րդ կետով՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն առաջարկությունը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

**«ԳԱԼՈՑԱՆ ԵՂԲԱՅՐՆԵՐԻ ԱՆՎԱՍԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՍԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ԿԱՍ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Գալոցյան եղբայրների անվամբ փողոց անվանակոչելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում լրացումներ և/կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

**«ԳԱԼՈՑԱՆ ԵՂԲԱՅՐՆԵՐԻ ԱՆՎԱՍԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ
ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՍԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ
ԱԿՏԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ԿԱՍ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Գալոցյան եղբայրների անվամբ փողոց անվանակոչելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում լրացումներ և/կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ